26.01.2024

N01-57

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

ԲՄԿ ՊՈՒՀ «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան»-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Է ԵՎ Ա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 13.12.2023 թվականին կնքված «ՌՀ-ՍՀ-ԳՀԾՁԲ-17/23» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը ստանձնում է Ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգի (այսուհետ՝ համակարգ) տեղադրման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, որտեղ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրվա ընթացքում պետք է տեղադրվի ծրագիրը, իսկ ծառայության մատուցումը ծրագրի տեղադրման օրվանից հաշված 24 ամիս»»:

Համակարգի տեղադրման ժամկետը լրացել է 2024 թվականի հունվարի 11-ին, սակայն Կատարողի կողմից այն չի տեղադրվել: Ավելին, Պայմանագրի 7.6-րդ կետի համաձայն՝ «ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ...»: Սակայն Կատարողը չի դիմել համակարգի տեղադրման ժամկետը երկարաձգելու համար:

Պատվիրատուն գրությամբ Կատարողին լրացուցիչ տվել խելամի ժամկետ՝ 5 /հինգ/ օր՝ համակարգի տեղադրման համար: Կատարողին տրված լրացուցիչ ժամկետում վերջինիս կողմից ներկայացվել է համակարգ, որը չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, ինչի արդյունքում անհնար է դառնում Պատվիրատուի կողմից գործածել համակարգը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»։

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը»։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված՝ 5 995 000 (հինգ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով։

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները։

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան»-ի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ՀՀ 2480100103250010 հաշվեհամարին փոխանցելու նպատակով։

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում։ Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան»-ի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ՀՀ 2480100103250010 հաշվեհամարին), ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով,

Ռեկտոր՝ **Է. Սանդոյան**

ՌԵԿՏՈՐ | ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
0051, Հայաստան, Երևան, 123, Հովսեփ Էմինի փ. | հ.: (+374 10) 28-97-00 | ֆ.: (+374 10) 22-14-63 | rector@rau.am